ՊԱՇՏՈՆ	Ծրագրային ապահովման բաժնի ղեկավար
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ	Հուլիսի 08 , 2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	Հուլիսի 31, 2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու, նպատակասլաց և բարձր որակավորում ունեցող թեկնածուի, Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության Ծրագրային ապահովման բաժնի ղեկավարի թափուր հաստիքը համալրելու նպատակով, ով պատասխանատու է լինելու ստորև թվարկված պարտականությունների իրականացման համար: Ծրագրային ապահովման բաժնի ղեկավարն ունի առաջատար դեր, ով պատասխանատու է Ավտոմատացված բանկային համակարգի զարգացման և աջակցման ապահովման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ավտոմատացված բանկային համակարգի զարգացման թիմի ղեկավարում, բիզնեսի՝ ծրագրային ապահովման մասով պահանջները բավարարելու նպատակով,
- Ավտոմատացված բանկային համակարգին առնչվող բոլոր գործողությունների մոնիթորինգի, կառավարման և առաջընթացի մեխանիզմների ներդրում,
- Ավտոմատացված բանկային համակարգը մշակող ընկերության հետ համագործակցության համակարգում, վերահսկում և կառավարում Բանկի Ավտոմատացված բանկային համակարգի զարգացման և աջակցման պահանջների իրագործման ապահովման նպատակով,
- Բանկի հետ համագործակցող այլ ծրագրային ապահովման մշակմամբ զբաղվող ընկերությունների հետ սահուն և արդյունավետ համագործակցության ապահովում տարբեր նախագծերի շրջանակներում, որոնք ներառում են ծրագրային ապահովման մշակում և աջակցություն,
- Ավտոմատացված բանկային համակարգի շարունակական բարելավման պլանի նախագծում և իրագործում,
- Սերտ համագործակցություն Բիզնես վերլուծաբանների, Պրոդուկտների ղեկավարների և Նախագծերի ղեկավարների հետ Բանկի բոլոր ֆունկցիոնալ ստորաբաժանումների բիզնես պահանջներն իրականացնելու նպատակով,
- Տեխնոլոգիական տենդենցների բացահայտում և զարգացմանն ուղղված քայլերի մշակում, որոնք հնարավորություն կունենան նպաստել բիզնեսի հետագա հաջողությանը,
- Պատասխանատվություն Ավտոմատացված բանկային համակարգի զարգացմանն ուղղված նախագծերի ժամանակին և պատշաճ որակով իրագործման համար,
- Պատասխանատվություն Ավտոմատացված բանկային համակարգի աջակցման ներքին և արտաքին համակարգերի ապահովան և մշակման համար:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ բանկային գործունեության ոլորտում (այդ թվում բանկերում, բանկային ոլորտում մասնագիտացած SS ընկերություններում, միկրոֆինանսական հաստատություններ և այլն),
- Բարձրագույն տեխնիկական/ֆինանսական/ինժեներական կրթություն,
- Oracle տվյալների հենքի իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- SQL լեզվի լավ իմացություն և PL/SQL լեզվով ընթացակարգերի ծրագրավորման փորձ (որպես այլընտրանք դիտարկվում է MS SQL Server TSQL լեզվով),
- LSBank, AS-Bank կամ այլ ավտոմատացված բանկային համակարգերի հետ աշխատելու փորձ,
- Լեզուների իմացություն – հայերեն, ռուսերեն, անգլերենի իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- Լավ թիմային և ղեկավարման հմտություններ,
- Թիմում աշխատելու գերազանց հմտություններ,
- Լավ վերլուծական և խնդիրներ լուծելու հմտություններ,
- Լարված իրավիճակներում աշխատելու և սահմանված վերջնաժամկետներում աշխատանքներն ավարտելու ունակություն,
- Հաղորդակցման հմտություններ,
- Արտաժամյա աշխատանք կատարելու և անհրաժեշտության դեպքում աշխատանքային ժամերից հետո բիզնես գործընթացներին աջակցելու պատրաստակամություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/161: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/